ՄԵԾԱՊԱՏԻՒ ՑՈՎՍԷՓ ԱՂԱՑ ՊԱՐՈՆԵԱՆ

Այս ներկայ ուխտաւորս ու Խարասու քաղաքի մեր Հայ հասարակութիւնը երախտագիտութեան սրբազան պարտք համարած են ինքեանց քանի մի գարշ խօսքով թարգման լինել իւրեանց սրտից քաղցր զգացմանցը առ Ձեզ այս տեղ սուրբ ուխտատեղւոյս մէջ հրապարակաւ իբրու անմոռանալի նշան իւրեանց անկեղծ և ջերմ շնորհակալութեան, երախտագիտութեան, և յարգանաց Ձեր ինամեայ հաւատարիմ և արդիւնաւէտ ծառայութեանն համար սուրբ Փրկչավանքիս Երեցփոխանական պաշտօնով։ Այս կիսոստովանին նոքա որ Ձեր այս ինամեայ երէցփոխանութեան խոհական և արդիւնաւէտ կառավարութեամբը միայն կարողացաւ սուրբ Փրկչավանքս իւր այժմեան ներքին և արտաքին փառաղարդ վայելչութեանն հասանիլ ոչ միայն նիւթապէս, այլ կարելի է ասել՝ հոգեպէս եւս. քանզի Ձեր երէցփոխանութեան միջոցին այս սուրբ վայրս դիմող բարեպաշտ ուխտաւորք յայտնապէս տեսանելով իւրեանց փոքրիկ տուրքերուն և նուէրքներուն մեծամեծ պտուղներն ու գեղեցկազարդ շքեղութիւններով տաճարիս ներքին և արտաքին պայծառութիւնը, սկսան հետզհետէ վառել և բորբոքել հեռաւոր և մերձաւոր աղգայնոցս սրտերը բարեպաշտական սուրբ զգացմամբ, և տարուէ տարի բազմանալ բարեպաշտ ուխտաւորաց թիւը, մինչդեռ բաւական տարիներէ հետէ գրեթէ մոռացուածի պէս էր մեր երանելի նախահարց այս բարեպաշտական սովորութիւնը շատ տեղեր թերակղզւոյս մէջ։ Բաց յայտցանէ կիսոստովանին նաև՝ որ Ձեր հաւատարիմ և փոքաւոր գործունէութեան վերայ վստահանալով էր, որ անցեալ տարի քանի մի բարեպաշտ աղգասէրք ինքնայորդոր եռանդեամբք խոստացան սուրբ Փրկչավանքիս քանի մի սենեկաց շինութեան ծախքը վճարել. յորոց ոմանք իսկոյն անուններն եւս ստորագրելով հաստատեցին իւրեանց վճարելիք խոստմունքներն սուրբ Փրկչավանից մատեանին մէջ. որք էին 1) Մծապատիւ և ազգասէր Խաչատուր Աղայ Պաքալեան 500 ռ. արծ. 2) Աղնուական և Ազգասէր Յակոբ աղայ Զարեքճեանն 100 ռ. արծ. 3) Մեծ. և ազգասէր Աւետիք աղայ Թումանեան 100 ռ. արծ. 4) Մեծ. և ազգասէր Խաչուկ աղայ Եաղճիեան 100 ռ. արծ. 5) Մեծ. և ազգասէր Կարապետ աղայ Ախճիեան 100 ռ. արծ։ Եւ ահա յատկապէս այս բարեպաշտ ազգասիրաց փափագը կատարելու և սուրբ Փրկչավանքիս այս սենեկաց կողմանէ ունեցած պակասութիւնն եւս լրացուցանելու համար էր, որ Դուք յանձն առիք դարձեալ մեր Խարասու քաղաքի Հասարակութեան խնդիրքը սուրբ Փրկչավանքիս երէցփոխանութեան չորրորդ եռամեայն եւս շարունակելու. որով առաւել եւս առիթ տուիք ժողովրդեանս զգալ անկեղծօրէն, որ Դուք ճշմարտապէս զոհ կրերէք Ձեր անձնականը Ազգիս սիրոյն և սուրբ Փրկչավանքիս պայծառութեանը։ Ուստի և ժողովուրդս կ՚յուսայ անհամբեր փափագանօք նոյն սենեկաց փառաւոր շինութիւններն եւս օր յառաջ լրացած տեսանել Ձեր բազմափորձ և հաւատարիմ կառավարութեամբը ի պարծանս Ազգիս և ի փառս Փրկչին մերոյ Քրիստոսի։ Որով և Խարասու քաղաքիս հասարակութիւնը պարտաւոր կ՚համարէ ինքը զինքը որ Ձեր այսչափ հաւատարիմ և արդիւնաւէտ ծառայութեանց փոխարէն ոչ միայն իւր ի խորին սրտէ անկեղծ և ջերմ շնորհակալութիւնները մատուցանելով բաւականանալ, այլ նաև իւր երախտագիտութեան և մեծարանաց նշանը առ ձեզ անմոռանալի թողու իւր և Ձեր սրտի մէջ արժանաւոր յիշատակի պատուանշանով մի եւս պատուելով զՁեզ ըստ օրինաց Օրհնարանեալ Տէրութեանս Ռուսաց, չինայելով այս մասին իւր թախանձագին միջնորդութիւնն ու խնդիրքը՝ ուր որ արժանն է։

Յովհաննէս Մելքոն վ. ծրժ. Իշխանեան

ՆՈՐ ՏԱՐԻ

ԳՕՐԻՈՅ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՅԻ

Լոմբարդո-Ռեան Աբարար ամսագրոյ.

Յետագայ ազգաօգուտ ուրախալի նամակովս կամենում եմ նուաստ ծառայութիւնս ընծայել Աբարար ամսագրոյ Խմբագրութեանդ, որը զարա-